

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԲԱՐՈՋ

“Նորոգող հմութեանց, մորթեա եւ
գիս, մորոգ զարդարեա”.

(Ներսէս Շմորիալի)

Դարձեալ կամզմած ենք Նոր Տարուայ սեմին եւ ժամանակի այս համգրուամիմ, պատեն է որ, յետադարձ ակմարկ մը մետեմք ամցմող տարուամ վրայ, տեսնելու համար թէ, որքամով կրցած ենք իրականացնել մեր վրայ դրուած յոյսերն ու ակնկալութիւնները, մեր ըմտամիքեմ, մեր շրջամակէմ եւ մեր համայնքեմ: Կ’ըսեմք այս, այն խորումկ համ-գումով, թէ մեզմէ իւրաքմաշիւրը դեր մը, պարտականութիւն մը ունի կատարելիք, հոգ չէ թէ, որքամ համեստ ըլլայ ամ: Իսկ մեր առջեւ բացուող տարիմ, իր 366 օրերով, պէտք է որ, մեզի մերկայամայ իբրեւ մեր կեանքիմ մոր ու ճերմակ էջը եւ մեր պարտա-կանութիւնմ է, խորհիլ ու ծրագրել թէ այդ էջերը իմչո՞վ կը լեցնենք:

Մեզմէ ոչ ոք գերծ է մարդկային թերութիւններէ, յամցամքներէ, սխալներէ, մեղ-քերէ եւ մոլութիւններէ: Եթէ ջամայիմք, գէթ ամէմ տարի, ձերբազատուիլ այս յոռի ու մակութիւններէմ գէթ մէկէմ, կրմա՞ք երեւակայել, որքամ չարիքներ պիտի խնայուէին մեր շրջամակիմ: Եւ եթէ, իւրաքմաշիւր ամհատ այսպէս խորհէր ու գործէր, ամշուշտ թէ, կեանքը պիտի ըլլար շատ աւելի քաղցր ու տամելի եւ քրիստոնէական առաքնութիւնները պիտի փայլէին մեր վրայ:

Ժամանակը տրուած է մեզի Աստուծոյ կողմէ, գործածելու իր փառքիմ եւ մեր բարի գործերու: Ժամանակը պէտք է արժեւորուի դրական աշխատանքով: Պէտք է հեռու վաննք մեզմէ ծխական արարքները, որոնք միայն կործանումի եւ կորստեան կ’առաջնորդեն: Ըստ Ս. Գրքի, ծառը յայտնի կ’ըլլայ իր պտուղէմ: Մեր դրական մտածումները գործի վերա-ծեմք, թոյլ չտալով որ չարը իր աւերները գործէ: Քրիստոնէական բարոյականը միայն հիացումի առարկայ չէ, այլ կեանքար պարտւմներու առաջնորդող ուղիմ է: Ներկայ դարու արժեքներու վերիվայրումներում մէջ, հարկ է որ, հոգեւորը եւ բարոյականը, արդա-րութիւնը եւ իրաւունքը իրենց արժանի տեղերը գրաւեն:

Ամերիկացի հեղինակ մը, որ իր կեանքի երիտասարդ տարիները յումպէտս վատմած էր ածամ հաճոյքներով, իր հասում տարիքիմ, կ’ափսոսար վատմուած ժամանակիմ եւ կ’ըսէր. «Ես ժամանակիմ յարգը չգիտցայ, հիմա ժամանակը իմձմէ վրէժ կը լուծէ»:

Ջամամք ուրեմ, ժամանակի երեք սահմանումներէմ – ամցեալը, մերկամ եւ ապագամ – մեր տրամադրութեան տակ եղող միակը, այսինքն մերկամ օգտագործել լաւագոյն կերպով, դասեր քաղելով մեր ամցեալէմ եւ լաւատեսութեամբ մեր կամքերը պրկելով դէպի ապագամ: Ամցեալը ետ չի վերադառնար, իսկ ապագամ կրմայ մերը չըլլալ:

Որեւէ ըմկերութիւն եւ կազմակերպութիւն, որ գուրկ է մորոգուելու ըմգումակու-թեմէմ, չի կրմար յառաջդիմել, շատ շատ տեղքայլ կ’ըմէ, ի վերջոյ կազմալուծուելու եւ ամէամալու համար: Ուրեմ, Նոր Տարուայ սեմին, ուխտեմք որ մեր գործերը ու մտածումները աւելի հաշտ ու համաձայն ըլլան Քրիստոնէական բարոյականիմ, որ մարդերը երջանկութեամ եւ ամոր ակնադիւրը եղող Աստուծոյ կը մօտեցնէ: Միայն այս կերպով, պիտի կրմամք յառաջիկայ Ամանորիմ, եթէ Տէրը մեզի կեանք շմորիէ, չափսոսալ ամցմող օրերում եւ վատմուած ժամանակիմ, ու հոգեկամ արիութեամբ դիմագրաւել ապագամ առանց վարամուսի, եւ խարխափումներու:

Թող Տէրը, այս շմորիքը եւ գիտակցութիւնը պարգեւէ մեզ բոլորիս 1992 լուսաբա-ցիմ:

Շմորիաւոր Նոր Տարի:

ԱՆՈՒՇԱԿԱՆ Ծ. ՎՐԴ. ԶԴՋԱՆԵԱՆ